

ԲԱԺԱՆՈՐԴԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար  
Տարեկան 12 թր  
Վեցամսեայ 6 "  
Արտասահմանի  
Վեցամսեայ 8  
հսկար տարեկան 15

Անկերկայի համար  
Տարեկան 3 s r.  
Վեցամսեայ 1.50 "

Պատկերներու տպու-  
թիւն երեսին համար 40 ս.  
իսկ վերջին երեսի հա-  
մար 20 սանդիւկէ. երեքին  
ուելի ակզամներու համար  
20 սանդիւկէ կը լայնայ .

Վառելի համար ձեռքի 10 սանդիւկ

# ՇԱԲԱԹ

R. P. Kalémecarian,  
(Autriche) W. 4.  
Mechitharistengasse  
Vienne f k

Նախկին Երևանի զրկն  
հրատարակչական հաս-  
ցիւն .  
Редация на вестникъ  
«Шаржумъ»  
Варна

Redaction du journal  
«Charjoun»  
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար  
ձեռքի

≈ 15 ՍԱՆԹԻՄ ≈

Իրուսիակէ եւ յեն տուի

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱԲԱԹԻՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՆԴՐԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ ԵՒ ԿԱՆՆԻՆ ՎՃԱՐԷ

### ՍԳԱՒՈՐԸ

Իրավաբան Ժոս Ժայախի վերայ խո-  
կայի՛ր .  
Զինչ առտուան ճաճանչներուն տա-  
կը լուս .  
Իրավ յոգնած իր երգերէն մշտա-  
լուս .  
Խոկա՛ր ան ալ դաշտի մը պէս ա-  
մայի .

Ու դուն եկար լուս կայնեցար  
քովս ի վեր .  
Աղւոր աչքով այն վեհ կէտին սե-  
ւեռուն .  
Ուր ծով երկին կը համարուին  
հոն հեռուն .  
Ա՛նգ բուրբէին համակ հագած քո  
սեւեր :

Ա՛նգ գրուած էր ճակատի վերայ  
վտանար .  
Թարթիչներէդ կախուած չիթ մը  
ջերմ արտօսը  
Յող մ'էր գոգցես ծաղկի թերթից  
մէջ անօսը .  
Որ ծըխաչունչ բոյրի մը պէս կը  
մըխա՛ր :

Շուշան մ'էիր սեւերու մէջ փաթ-  
ուած .  
Թէ արձան մը, որ մունջ, ան-  
շարժ մընացիր .  
Ինչ խորհեցար հոն մամբերով մը-  
տացիր .  
Ազոթիցի՛ր թ'անիծեցիր Աստուած .  
—Աղաւոր մ'եմ, այո՛, տըխուր  
սըգաւոր .  
Հանքիս տակը կ'ապրի շատոնց  
վիշտ մը մեծ .  
Վիշտ հայուս, հայրենիքին տըրտ-  
մահեծ .  
Այրիացա՛մ, անո՛ք կանանց բիւ-  
րաւոր .  
ՎԵՏԱ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ԲԱԺԱՆՈՐԴ» ՍԻՆԻՒՆ ԸՆԹԵՐԳԱՐԱՆԻ  
ՎՋԼ ԿԸ ԺԱԽՈՒԹԻ ԱՏՈՄ ԵՄՐՃԱՆՆԵԱՆԻ  
ՊԻՐԵԱԶՆՈՐԷՆՆԸ Ի ՆԱԿԱՍՏ ՀԱՅ Ու-  
ՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ :

Գինն է 1 լէֆ արծաթ .  
Կը ծախուի նաեւ «Ղարկի» Ազա-  
տուութեան ծանուագրերին .  
Գինն է 80 սանթիմ  
Վառնա

### ՏՆԱՅԻՆ ՏԱՂԱՆԴԸ

Անցեալ հինգշաբթի օր «ՎԷ-  
ՍԷԼՈ» խմբը ներկայացրեց  
Վէրքիի հաշակաւոր «Այրի»-ն  
առանց երգի .  
Ճշմարտն ասաց միայն լուրջ  
պիէս տեսնելու կարօտը ինձ մը-  
ղեց դէպի թատրոն . թատրոն  
մտայ մեծ թերահաւատութեամբ,  
որովհետեւ բոլորովին վստահու-  
թիւն չունէի «Այրի»-ի և Քա-  
ղամէսի դերերը կատարողներ  
վրայ . որոնք կազմում են «Այրի-  
գա» ողբերգութեան սիւները .

Ուրախեմ խոստովանելու որ  
ես սխալվել էի . Բէմի վրա դե-  
րասաններ էի տեսնում . ոչ թը-  
քական օյինըսներ . կամ ան-  
խելք . ու ամեն վտանգից հրաշ-  
քով ազատվող շինձու ու շարու-  
նակ գոչող հերոսներ : Անսահ,  
ման սիրոյ, անձնազուտութեան և  
վրէժխնդրութեան զգացումների  
եղևէջներն էին հանդիսող դրամ .  
այն զգացումների որոնք զեկա-  
վարում են մարդ արարածին .

Մանր, մանր րեցէնդիա պրելու  
մտադրութիւնը չունեմ . միայն  
այսքանը կարող եմ ասել որ Տիկ-  
Յակոբեան վրէժխնդիր, սիրող  
և անձնազուտ «Այրի»-ի դերը  
կատարեց անսպասելի յաջողու-  
թեամբ . Բաւական յաջող էր և  
Պ. Բաբայանը Բաղամէսի դե-  
րում .

Տիկին Յակոբեանը յառաջադի-  
մել է հակայաքայլ . դեռ երկու  
տարի առաջ քէմի վրա շատ, շատ  
աննշմարելի և ողորմելի էր .  
իսկ այսօր նա դերասանուհի է .  
և ուշագրութիւն լարող դերա-  
սանուհի :

Ո՛ւր սովորեց Տիկինը արեւս-  
տը . «ՎԷՍԷԼՈ» խմբի մէջ . Ո՛վքեր  
են նրա վարպետները . «ՎԷՍԷԼՈ»  
խմբի անդամները . Այսպիսի մի  
դպրոցում այդչափ յառաջադի-  
մել անկարելի է առանց տաղան-  
դի :

Տիկինը տաղա՛գ ունի . այդ  
անուրանալի է . բայց նա ծանօթ  
չէ իր արեւստին վերաբերեալ

գրականութեան հետեւ երբէք եւ  
րոպական դերասանների խաղեր  
չի տեսել . Եթէ նա մի տարի  
զբաղվի իր զարգացումով, զու-  
գնթացաբար լաւ դերասանների  
խաղերին ներկայ լինի, համոզ-  
ված ենք որ աչքի զարկող դե-  
րասանուհի պէտք է դառնայ .  
Յետոյ Տիկին Յակոբեանը, եթէ  
իսկապէս արեւստը սիրում է,  
երբէք թոյլ չը պէտք տայ իրեն  
բէմ դուրս գալ թըքական զանա-  
զան օյինբաղութիւնների մէջ .  
որովհետեւ այդ օյինբաղութիւն-  
ները կը մեռցնեն իր նորածիլ և  
դեռ անմշակ տաղանդը .

ՎԱՐԳՈ

### ՎԱՌՆԱՅԻ ԶՈՂԱՐԱՐՁՈՒՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Վաղը կիրակի օր տեղի պիտի  
ունենայ Վառնայի Ազգ. երկսեռ  
վարժարաններու հոգաբարձուներու  
ընտրութիւնը կատարա-  
կան ընտրութիւններու հետ . տե-  
ղացի հայութիւնը անխտիր կեր-  
պով կարող է մասնակցել այդ  
ընտրութեան . հակառակ թաղա-  
կան խորհրդին հրաւերին շատ  
քիչեր, այսինքն գրեթէ 5-6  
հոգի միայն հետաքրքրուած և  
ներկայ էին գտնուած հինգշաբ-  
թի իրիկունը ընտրելիներ ներ-  
կայացնելու օտթիւ կատարուած  
խառն խորհրդակցութեան մը .  
ասիկա արգէն ապացոյց է թէ  
մենք որչափ կը հետաքրքրուինք  
մեր վարժարանական գործերով,  
ինչ որ արգէն մեր գոյութիւնը  
ապահովելու համար մէկ հատիկ  
միջոցն է . մենք գիտենք խոսիլ,  
բայց գործադրել երբէք, այդ  
մեր գործը չէ . անխորդ կը հա-  
մարինք խօսել դպրոցներու օգ-  
տակարութեան վրայ . որովհետեւ  
այդ արգէն ապացուցուած իր-  
գովութիւն մըն է . մեր դպրոցները  
նախանձելի վիճակի մը հասցնե-  
լու համար մեզի օրինաւոր հա-  
գաբարձուներ պէտք են . և մենք  
չենք կրնար ահաւասիկ այդ մար-

մինը ստեղծել . ստեղծել այն .  
պիտի մարմին մը որ հասարա-  
կութեան վրայ գոնէ փոքրիկ  
ազդեցութիւն մը ունենալով կա-  
րենայ ճանչցնել անոր իր վար-  
ժարանին հանդէպ ունեցած  
պարտքը . Մենք եթէ հետաքրք-  
րուինք մեր կրթական գործերով,  
պիտի տեսնենք որ մեր ունեւոր  
այսինքն քիչ մը բարեկեցիկ ազ-  
գայինները իրենց պաւակներու  
կրթութեան գործը աւելի նախա-  
մեծար կը համարին օտարներու  
յանձնել քան Ազգ. վարժարան-  
ներու . մտտա դարձած է գրեթէ  
կաթոլիկ վարժարանները . տղաս  
Ֆրանսիացիք ալ խօսի գաղա-  
փարը կը շլացնէ մեզի և մենք,  
անխտիր ամեն դասակարգէն, մեր  
թէ մանչ և թէ աղջիկ զաւակ-  
ները կը զրկենք այդ վարժա-  
րաններու մէջ կրթութիւն . այդ  
վարժարաններու որոնք ազատ  
ձրանսայի մէջ անգամ իբրեւ  
փրակաւոր հաստատութիւններ  
փակուեցան . Ահաւասիկ ձրան-  
սացին հասկցած է այդ կրօնա-  
ւորներու փտեցուցիչ ազդեցու-  
թիւնը մատուց մանկտիւն վրայ  
և մենք դեռ կը յամառինք  
հասկնալ . չենք պիտեր թէ ի՞նչ  
է այն օգուտը որ կուտայ Ֆրան-  
սերէն սորվիլը, մանաւանդ ազ-  
ջիկներու համար . ո՞վ կը հետա-  
քրքրուի մեր մայրեր պատրաս-  
տելու խնդրով, չենք տեսնոր  
չուրջերնիս և չը հատուցեցանք  
գեռ թէ ֆրանսական այդ թե-  
թեւ կրթութիւնը միայն զիւր-  
բէներ կրնայ հասցնել մեզի . կար  
ծես չէ լրացած անոնց թիւը և  
կուզենք լրացնել . և ասոր պատ-  
ճառը դարձեալ այն է որ  
մենք չենք գիտեր մեր վարժա-  
րաններու գործը վարել, ստեղ-  
ծել ազգային ինքնուրոյն կր-  
թութիւն, որպէսզի մեր քիչ մը  
կարող դասակարգը շատիպուի  
օտարին գիմել . եթէ գործ չու-  
նիս, խօսէ ու գրէ . մենք ամենք-  
նիս ալ վարժարանէ կը հաս-  
կնանք, ամենքնիս ալ գիտենք  
անոր կարեւորութիւնը . բայց  
երբ որ վարժարաններու անմի-

ջական պէտքերուն համար մեզի գիտում մը ըլլայ, մեզմէ ոմանք որովհետեւ իրենց պատկերներու շին տեղ կը զրկեն, շին սատարեր, ոմանք ազգային կրթութեան հարցով բնաւ շին հետաքրքրուի, ոմանք թաղականին կամ հոգաբարձուն շին հաներ, և ուրիշ այսպիսի առարկութիւններ. ու այս պատճառով ալ եթէ մենք երկինքէն հրեշտակներ ալ իջեցնենք մեր գործընկերը կառավարելու համար պիտի գտնուին մեր մէջ անոնց ալ չը հաւնող մարդիկներ: Այսպէսով մեր կրթութեան գործը Պուլկարիոյ մէջ միշտ պիտի լինի: Լրջօրէն մտածենք քիչ մը և շուտ մը պիտի համոզուինք տխուր իրողութեան առջեւ:

Յախճ կը տեսնենք հրաւիրելու հայ հասարակութիւնը որ իւր քուէն տայ հետեւեալ անձերու Վառնայի Ազգ. վարժարաններու հոգաբարձութեան ընտրութեան առթիւ, որոնք մեր կարծիքով պիտի կրնան օգտակար հանգիստանալ վարժարաններու բարձր մատակարարութեան գործին:

- Տիար Յովակիմ Մ. Թովմասեան
  - « Կարապետ Սուրբանեան
  - « Գալուստ Ասադեան
  - « Փիլիպպոս Հալապեան
  - « Յարութիւն Հանօբեան
- Ուրիշ անձիով մենք կը պար-

զենք մեր հայեացակէտերը Պուլկարահայ վարժարաններու ծրագրի միօրինակութեան համար:

ՄՈՒՐԱՏ ՍՈՒՐԱՏ

### ԹՐԲԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Բացի ֆրանսական մեծ և գլխաւոր խնդրէն որ թուրք իշխանութեանց անհանգստութիւն կը պատճառէ որովհետեւ ընդունուած է թէ առանց «փարայի» կարգապահութեան և ապահովութեան անկարելի է մանաւանդ թուրքիոյ մէջ: — Կան նաեւ երեք զիտուր խնդիրներ որոց խառնակ վիճակը փատիշահին և իր մտերիմ պալատականներուն մեծ վրդովում կը պատճառէ և կարգիւ է իրենց ասիական խաղաղ և մեղկ քունը քնանալու:

Այս խնդիրներէն առաջինը է որ թուրքիան լուրջ մտածուիներու մէջ կը գլորէ, կայսրութեան հիւսիսային նահանգներու անվերջանալի խառնակութիւններն ու անկարգութիւններն են: Մակեդոնիան և Ալպանիան Սուլթանի աչքերուն երկու փուշերն են այսօր: Թուրք կառավարութիւնը կը վախնայ—եւ իր վախը ամուր հիմանց վրայ դրուած լինելու են...—Թէ այդ նահանգներուն շարունակական անկարգ վիճակը և Պուլկարներու Մակեդոնիոյ մէջ կատարած դերը, տեղի պիտի տան մեծ պետութիւններու միջամտութեան: Եւ արդէն մէկ երկու շաբաթներէ ի վեր գիւրեանագիտական շրջաններու մէջ այդ ուղղութեամբ լուրեր կը

պտտին, առանց հիւստեւելու... Թուրքիան սարսափի մէջ է որովհետեւ կը կարծէ թէ Ալպանո—Մակեդոնական խնդիրը վերջնական և արմատական լուծում մը տաճալու օրուն հասած է...

Բուլղար յեղափոխականներու թուրքիոյ հողը մտնելը, հրոսակախմբերու Մակեդոնիոյ և հիւսիսային միւս գաւառներու մէջ կատարած գործերը, կատարելագոյն բաւական են միջամտութեան սր համար, այնպէս որ բնաւ չը պիտի զարմանանք եթէ քիչ առնէն թուրքիոյ արդի կացութիւնը բոլորովին փոխուի, և այս մեծ պետութիւններու առատարտութեան շնորհիւ: Թուրք կառավարութիւնը որ չի սիրեր իր ներքին գործերու մէջ օտարին միջամտութիւնը տեսնել, այսօր ստիպուած է, կըսեն, իր վեհապետի Սուլթանին միջոցով միջամտութիւն մը խնդրելու, որովհետեւ կը տեսնէ թէ անկարելի է ուրիշ կերպով վարուիլ:

Արդէն Մանասթրի վերայէն ինչ մէջ պատահածները մեծապէս վրդոված են և Պոլսոյ պաշտօնական շրջանները: Որովհետեւ այդ վերայէնի ժողովուրդը բոլորովին անտանելի դուրսեան մը մէջ կը գտնուի. ներկայ դրութեան մէջ թուրք կառավարութեան խորհուրդներ ալ ու կշտամբանքներ ընելը բաւական չեն կրնար լինիլ այլևս: Մանասթրի մէջ անցած զարձաններէն յետոյ թուրք վարիչներու վրդովումն ալ, պարզ կերպով կը ցուցնէ թէ պետութեան միջամտութիւնը անհրաժեշտ է և այդ ալ կը հաստատուի: Որովհետեւ յայտնի է թէ Վափորի մարտաօդները մեզ չեն վարժեցուցած հաւասարութիւն իրենց

վրդովումն ու իրարանցումը առաջ կուգայ ճնշուածներու և հալածակներու համար իրենց ունեցած համակրութենէն... — Սուլթան եղբուրթիւններուն լուրը անտանելի պէտքերով մասնախումբ մը կազմել տը և մեծ վէճի ինչ նախաշահութեան տակ, որն անմիջապէս և խիստ միջոցներու պիտի գլորէ... որովհետեւ Սուլթանը հասկցեր է թէ Մանասթրի մէջ պատահածները նախաբաններն են ուրիշ շատ մը եղբուրթիւններու շատ աւելի կարեւոր և ծանր, որք տեղի պիտի ունենան Պուլկար կոմիտէներու երկու հարիւր գործիչներու ձեռքով, որոնք դեռ նոր մասնախումբներն են:

Երկրորդ խնդիրը, որ նուազ կարեւոր չէ թուրքիոյ համար, Պուլկարիոյ անկախ թագաւորութիւն հռչակուիլն է: Մէկէ աւելի անգամներ այս լուրը արարածուցաւ և հերքուցաւ. բայց այսօր հռչակուելով զանազան գիւրեանագիտական շրջաններէ և նոյն ինքն Ֆէրիսիանա իշխանէն, այդ լուրը մտածել կուտայ թէ այդ խնդիրը արդէն ուսումնասիրուած է և շատ հաւանականութիւն կայ որ այս անգամ իրականանայ առանց վիճելու: Թուրք կառավարութիւնը հակառակ խաղաղութիւնը պահպանելու համար ուստի պետութեան հետ ունեցած համաձայնութեան, սկսած է արդէն կողմանի հարկատու իշխանութեան (Պուլկարիոյ) պաշտպան պետութեան (Ռուսիան) վրայ: Սուլթանը կը կարծէ թէ ուստի կառավարութիւնը յարմար առիթ կը փնտոյ իր պաշտպանալ իշխանութեան կատարելալ անկախութիւն հռչակելու: Բայց ստիպուել կան որոնց առաջ բերելը կամ տեղ-

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Ա. ԳԼՈՒԽ Զ.

17

Խուզարկու ոստիկանները հեռանալուց յետոյ, Մաղիկեանը սկսեց շրջազայել իր սենեակում և մտածել: — Այսուհետեւ այս քաղաքում ապրել չի կարելի. Այս ապուշները էլ հանգստութիւն չը պէտք է տան. առանց որ մի յիմար պատճառ պէտք է գտնուի ինձ այցելելու համար: Շարունակ խուզարկութիւն, շարունակ հալածանք: Այս խուզ անկիւնն էլ չազատեց զրոնց ձեռքից:

Էհ, ինչ ուզում է թող լինի. ընդ ամենը մի երկու ամիս մնաց: Բայց շեղիւնէն, շեղիւնէի հետ ի՞նչպէս պէտք է վարվեմ. ո՞ր տանեմ ևս նրան, ինքս գլուխս դնելու տեղ չունեմ:

Չէ, ծանր խնդրի մէջ մտայ ես: Այո, սիրելի լաւ բան է. բայց ունի եւ իր սեւ կողմերը. մինչեւ շեղիւնէին պատահել թոյնունի պէտք ազատ էի. գնում էի որ ուզում էի. որչափ էլ ինձ հետու քէթին, հոգս չէր. չէի ընկճուում. որոհեաւ ամեն մի անկիւնում էլ մարդ կայ. սրտով մտքով և հոգով մարդ և այդ մարդկանց շատ դիւրին է գտնել: շեղիւնէն ասում է որ ամեն տեղ կը գայ ինձ հետ: Ասելը գիւրիւն է. բայց կատարելը. արդեօք շեղիւնէն պիտի կարողանայ գիւրեանալ ուստի կարողանայ գիւրեանալ ուստի կար-

նութեան հալածանքին ենթարկված մարդին վիճակված թափառումներին: Հիմա հորաքրոջ տանը սպասում է ինձ. գնամ, գուցէ կարողանամ համոզել որ ետ կենայ ինձից: Ազատեմ իր տեւած խօսքից, թէ և հաւատ չունեմ. բայց գոնէ իմ պարտքս կատարած կը լինեմ: Էհ, պարտքս կատարած կը լինեմ (.) ի՞նչ մեծ բան. ևս պարտքս կատարեմ, իսկ նա չի լսի և ինձ կը հետեւի շարժարկելու: տանվելու համար:

Ոչ, միայն խօսքով չը պէտք է հաստատել. այլ գործնական քայլ պէտք է անել: Ուղղակի պէտք է թողնել ու հեռանալ, իմ ամենամեծ պարտքս է նրան ազատել ապագայ սանձանքներից, նոյն իսկ առանց իր համաձայնութեան, թող ինչ ուղղում է ասի ինձ համար. բո՞ղ ուղտարութեւ անուանի ինձ: Բայց վերջը, շատ վերջը կը համոզվի որ իմ փախուստը իր հանգստութեան համար է եղել:

Տարօրինակ է կեանքը. մարդը կարող է երջանիկ լինել երջանիկ է. բայց մի փոքրիկ խոչնդոտ, ընկերական սխալ կազմակերպութեան միջոցին, աննշան արգելք, ամեն բան խորտակում է, ամեն բան տակն ու վրայ է անում. ներկայ աշխարհում անհատական երջանկութիւն ունենալու համար պէտք է եղային կեանք վարել. ուրիշ ոչ ինչ:

Բայց փիլիսոփայութիւնները ժամանակը չէ. շեղիւնէն սպասում է ինձ: Մաղիկեանը վերցրեց զիտարկը և դուրս եկաւ. իր բնակարանից: Մի քանի րոպէից արդէն շեղիւնէի հորաքրոջ տան առջեւ էր գտնվում: շե-

ղիւնէն իր ազգական հինգերի հետ դրանը կանգնած խօսում էր, երբ Մաղիկեանը մտնեց:

—Օհ, ուրեմն չը ձերբակալեցի՞նք ձեզ. ես իմացայ որ ոստիկանապետը և ժանդարմի կապիտանը արդէն քեզ մօտ են գտնվում, իսկոյն վրա բերեց շեղիւնէն:

—Այո, չը ձերբակալեցին, որովհետեւ կասկածելի բան չը գտան մօտս: Բայց ինչպէս երեւում է այլ ևս հանգիստ չեն թողնի: «աւելի լաւ է մարդու աչքը դուրս գայ, քան թէ անունը հռչակել» ասում է մեր ժողովրդական ասուածը: Մի անգամ կասկածելի հռչակվելուց յետոյ, էլ ոստիկանութիւնը իմ օձիքից բաց չի թողնի: Այսուհետեւ ճգնաւորի կեանք է: Եթէ անցնեմ, ոստիկանութիւնը միշտ պէտք է կասկածի. Ռուսաստանի մէջ բաւական է որ «քաղաքական անվտանգ» տիտղոսին արժանացար. այնուհետեւ ոստիկանութեան ձեռքում խողալիք ևս: Էհ, թողնենք. դրա մասին երկար խօսել չարժէ: Տուն գնալու է՞ք թէ ոչ:

—Այո, գնալու եմ. սպասեցէք զիտարկս դնեմ:

Շեղիւնէն Մաղիկեանը երկու խօսք էր փոխանակել: շեղիւնէի ազգականներին հետ, երբ շեղիւնէն զըլխարկը շտկելով դուրս եկաւ:

Երկու միտաբաններ ճամբա բնկան. Մաղիկեանը լուս էր. նա ուզում էր իր տասանուամբ յայտնել շեղիւնէին: Բայց չէր կարողանում:

—Այո, շեղիւնէ. գիտեմ, Բայց այսօրվայ դէպքը իմ միտքը տակնու վրա արաւ: Վաղը միւս օրը անկարելի կը լինի ինձ այս տեղ պարել. ինձ պէտք է հալածեն այս տեղից. եթէ չը հալածեն էլ, այնքան պէտք է նեղեն որ ես ինքս թողնեմ հեռանալ: Ու ի՞նչ պէտք է լինի ձեռ վիճակը: շեղիւնէ, խնդրում եմ, ուրիշ քաղաքներում չը գտնուի մօտս: Ես միայն չը հանգստութիւնը աչքի առաջ ունեմ: Մոռացիր ինձ շեղիւնէ, ես կասկածում եմ որ դու կարող ես ինձ հետ երջանիկ լինել: Մոռացիր քանի ուշ չէ. Մոռացիր քանի մեր սէրը իր բանաստեղծական շրջանի մէջ է գտնվում: Յետոյ, երբ մենք միասին լինենք. ու ես տեսնեմ, զքեզ որ ինձ հետ վարժարկեանք քեզ զփար է. դու տանվում ես. ես ինձ շատ զժախտ կըլքամ ես ինձ յանցաւոր կզգամ թուալեմ:

—Ինչքան ես ասում, Մաղիկեան, ի՞նչ կարծիք ունես իմ մասին: Ուրեմն դու հրաժարվում ես ինձից: Ուրեմն դու չես սիրում: Երկու կան երբ քաղցր է, երբ ներկայում երջանիկ եմ զգում ինձ, ի՞նչու քեզ իմ ապագան, որի մասին դրական ոչ մի բան չեմ կարող ասել: Պէտք է հալածեն քեզ... թող հալածեն, ինչպէս, միւս անգամ այդ տեսակ յիմար բաներ շատ ինձ. դրանով ինձ վերաբորում ես: Եթէ չես սիրում, յայտարարիր, իմ ապագան պատրաստ մի րոնիք: Այդ քեզ պատու չի բերում:

(Շարունակելի)

ծել դիւրին չէ, բայց անգամ մը որ ներկայանայ խելօք մարդիկը անկէ կօզաուելն, Սէն Բէթթրսպուրիի գիւտանագէտները, ուրիշներու չափ գիտեն օգտուել առիթն:

Երրորդ խնդիրը որ Սուլթանի եւ իր շրջապատողներուն մտքի պայծառութիւնը կը խոզվէ, այդ դաւաղութիւններու յաճախակի երեւան գալն է, որոնք միշտ Սուլթանի անգին կենաց(°) գէմ ուղղուած են... Ամեն անգ. աչքերնին ուր որ դարձնեն, դաւաղութիւններ կը գըտանեն... որոնք բարեբախտարար Սուլթանի եւ կայսրութեան փրկութեան չամար, միշտ կը միտին կամ ձեռնուն պէս կը խղճուին... Այդ դաւաղութիւններու հեղինակներն են երիտասարդ թուրքերը(°): Ինչպանութեան մէջ գտնուողներու նոյնպէս օսմանցի ժողովուրդին մեծամասնութեան զաղափարն այն է թէ երիտասարդ թուրքերու զաղափարը կայսրութեան քակման պատճառ պիտի լինի եւ առաջ պիտի բերէ մի եւնոյն զփրկատուութիւնը եւ միեւնոյն հետեւանքը ինչ որ պիտի պատահէր ուս կայսրութեան մէջ եթէ աչն սեղ կատարեալ ազատութիւն լինէր:

Մեկի՛ Մ. Դաւիթ Բեկ

### ՓՈՔԺԱՆԻ ԴԻՄԱԿԱՒՈՐԻՆ

Ծանօթ ճամբորդութեանս ընթացքին մէջ Ռօման հասնելով, յանկարծ ձեռքս կիրնայ վառանքի վատարանող զրպարտութեան թին ՅԵ Երրորդ թիւը, որ միակ հոս կը գտնուի մէկ բաժանորդ մը ունենալու պայմանաւ:

Խնդուկս չը կրցայ զսպել՝ կարգալով Ֆօքթիւնէն ինձ գէմ ուղղուած մեղուին խալթոցը, որ ուրիշը կճած ատեն ինք կը սուսժէ ու կիրնայ:

Այս պարագայ կը հաստատէ նաեւ «Լիկ» ծածկանունին տակ կճկուող և խարդաւանքներով «Լիկ» կամ Ֆէլիկեանը—մեր առժամանակեայ տիրացուն, որ բացակայութենէս օգտուելով՝ տէր Պետրոս կէջիճեան (չալիզ շալան) մականունանեալ (°) քահանան, որուն իմեանէս ասդին անգին զրկած դատարկան նամակները բւճած եմ, իրարու հետ միացած կը շանան ամեն ապտու միջոցներ սարքել և վրէժ լուծել ՚՞ քահանային ափրդ տեան ախտով վարակուած ըլլալը թէ Թորք քիւս և թէ հոս և ափրացուն ալ Բէօստէնճէյի գարոցը կառավարութեան մատնելը հրապարակելու համար, ինչպէս որ իրենց այս վերջին գարշելի յերիւրուածներն ալ զայդ կը հաստատեն:

Թէ ո՞րչափ սուտ ու շինծու է

(°) Մամիկոնեան մականունը կեղծ է և տէր Պետրոս Ռուսմանիս եկած ստեղծ հաղած է իր վատ անցնալը մոռցնել տալու համար. մինչդեռ իր բուն մականունը վերի յիշուածն է. այս պարագաներուն ընդարձակ պատմութիւնի գաս յօդուածով:

առոնց դրածը, այդ մասն հոգարարձօթեան պաշտօնական հերթումը զրկել վերագրութիւն թողլով, ես կը փութամ յայտնել բացորոշ ճշմարտութիւնը, զոր կեղծելու համար կէջիճեան Տ. Պետրոս մը և Չէլիկեան թմկահար մը պէտք են:

Բ. «Բացարձակապէս» սուտ է Ֆօքթիւնի հոգարարձօթեան յուրիս 14ին ժողով գումարելով զիս պաշտօնէ դադարեցուցած ըլլալը պաշտօնագրով մը, մինչդեռ ես յուրիս 13ին ամեն ինչ ինձ ի նպաստ կարգադրելով մեկնեցայ հետադուրութիւնս կատարելունոյն իսկ նոյն օրը. այս պարագային ի՞նչպէս կրլլայ հոգարարձօթեան մի կարեւոր անդամին կը դիմեմ, երբ Ֆօքթիւն չեմ գուցէ տէր կէջիճեան իր դաւաղարական նամակները անդին առգին զրկելու համար ունեցած թղթատարովը ինձ ալ զրկած է «Երեւակարան» պաշտօնագրից, բայց ես չեմ ընդունած. թող կրկնէ...

Բ. Խենդուկ «Լիկ» չակերտով խօսքերը իր ապուշ խելապահակին ծնունդն է, իւր թէ Ֆօքթիւնի պատ. հոգարարձօթիւնը շորտարիէ ի վեր կը քնանայ եզեր ՚՞ այսօր հասկցեր է իր պաշտօնէին ինչ ըլլալը, ցնորական տրամաբանութիւն. էօթէրսէ էյի տիւտիւկ, Չը հասկցայ, շատ իուհետ ես ալ, թէ ի՞նչ գործ ունիմ «ոտաշ»ներու հետ որ անոնց հակակրանքը շահած ըլլամ. Աստուած ողորմի այն մարդուն որ բան գրել չը գիտեր:

Գ. Թէ երբ և ի՞նչ նամակ գրեր եմ Պետքէյի քահանայից, քանի որ հետեւին յարաբերութիւն չունիմ, խնդրեմ թող մէջտեղ հանեն կամ գոնէ գրած ըլլալս յայտարարեն. նաեւ շնորհակալ պիտի ըլլայի պր. Լիկին, եթէ հաճէր շուտով գրել Ֆօքթիւնի կեանքիս վրայ իր կարծիքները, որովհետեւ կը սիրեմ սրբագրութիւնը նախ իմ անձէս սկսիլ, գուցէ ինձ անձանօթ յանցանք մ'ունիմ:

Ահաւասիկ, սիրելի՛ ընթերցող, եղբուրիւնը. անպին տէր կէջիճեան (կէզը Մամիկոնեան) և տիրացու «Լիկ» զիս կը հրաժարեցնեն, մինչդեռ ես բանէ խապար չունիմ և պաշտօնիս վրայ եմ դեռ. Այ ի՞նչ մակդիր տալու է այս մարդակերպ քահանային և իր մանկակալին, անշուշտ սուկալի ստող և խարդաւանող կոչել պէտք է:

### Ս. ԳՈՌԱՅՐ

Ռ. ԱՆՆ 6 օգոստոս 1912

### ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

«ԵՐՐՈՒՄ» ընթերցողներուն արդէն յայտնի է որ Ֆիլիպպի և Վանայի մէջ յայտնի մը ստոր և մատուցեան ընդունակ հայեր պուկար իշխանութիւններուն զրպարտագրութեան մասին ինք քանի մը գաշ... քանի որ Վանայի մէջ զանոնք խոզվարար ներկայացնել ջանալով, որպէսզի կառավարութիւնը զանոնք երկրէն արտաքսէ:

Մյդ անամօթները այնքան առաջ գացին իրենց ստորութեանը մէջ որ տեղական թուրք հայ թերթին մէջ հրապարակուալ յայտնեցին իրենց թրքական քաջագործութիւններու մասին:

Բայց պուկար կառավարութիւնը այս անգամ ալ ինչպէս և միշտ, իսկոյն ենթարկուած չէ այդ զրպարտագրութեան և տեղեկութիւններ ստանալով ստոյգ աղբիւրներէ տնօրինած է որ այդ խնդիրներու մասին լուրջ քննութիւն մը կատարուի, ամեն ինչ լաւ կերպով ստուգվի և բոս այնմ որոշում տրուի:

Մաս մը վատ հայերու ճիւղային գործերուն հանդէպ կառավարութիւնը ինքն է որ պատնէջ կը բարձրացնէ որպէսզի թրքացած հայերը պուկար պաշտօնեաներու հետ թրքականներու պէս չը վարուին:

Հուշակաւոր ձանկուրիան իր Գերմանիա ծախած սուտապատում կենսադրականին մէջ տեղ ելլալով վը խաղք ու խայտառակ ըլլալէն վերջը որոշեց որ իւր խաչագողութիւններուն պատմութիւնը վէպի ձևով հրատարակել «Իրաւունք»-Հոգու գրքին մէջ:

Կը շնորհատրենք Հաճի աղան, իր այդ նոր խաչագողութիւնով Գրական ասպարէզին մէջ ալ պիտի փայլի, ինչպէս փայլած է բոլոր ասպարէզներուն մէջ...

Մակեդոնացի յեղափոխականները երկու կուսակցութեան բաժնուեր են: Սարաֆօվիստներու մասը, որ մեծամասնութիւն կը կազմէ նոր Բ. կոմիթէ մը ընտրեր է, ուրիշ նախագահով մը, որովհետեւ Սարաֆօվ հրաժարած է պաշտօն ընդունելէ և յայտարարած է որ ինք այսուհետեւ երկրին մէջ պիտի գործէ: Սարաֆօվիստներու Բ. կոմիթէն շուտով դատ պիտի բանայ միւս Բ. կոմիթէին դէմ, որուն նախագահը Միխայիլովսքին է, կազմակերպութեան պաշտօնական թղթերը և օրգանը—«Ռէֆօրմի» թերթը—գրաւելու համար: Մեր

Մակեդոնացի եղբայրներուն միջև պատահած ներքին խռովութիւնները շատ դէշ պատարութիւն կը թողուն մեր վրայ. կը մաղթենք որ անոնք շուտով ազատին այդ խառն ու փնթոր վիճակէն և իրենց ազատագրութեան գործին կանոնաւոր ընթացք տան:

ԿԷՑ

ՊԱՏՐԱՍՍ ՍՈՒՐՁԻ ԳՈՐԾԱՐԱՆ «Ամազոն» Բրեսլաւսկա փողոց հրկեղաւայ Ապսիլադարանակն Ըսմիի ղիւնացր

Ստորագրելուս այսու կուզամ յայտարարել որ հաստատութեանս մէջ մեծ խնամքով և երոպական կատարելագործեալ մեքենաներով կը պատրաստուին ամեն ճաշակի յարմարող սուրճի տեսակներն, որք արուեստական անորակելի խարդախութիւններէ քիւսակար խառնուրդներէ, քրտինքէ և հակառողջական ազդեցութիւններէ զերծ ըլլալով հանգերձ խիստ գիւրամատչելի գներով կը զճառուին:

Հաստատութեանս այցելողն տեսնելով իմ պատրաստութեան եղանակը և լսելով իմ տալիք բացատրութիւններն միանգամ ընդ միշտ պիտի համոզուի որ պատրաստածս սուրճերը կը հաստատին իրենց յատկութիւններով ամենէն նրբաճաշակ և խնամոտ ընտանեաց մէջ պատրաստուած սուրճերու մաքրութեան, ինչպէս նաեւ իմ գներու շափուտութիւնը բողբոսութեան գներով տուններու մէջ 1 կամ 1/2 քիլօ ուրճի պատրաստութեան համար զոհուած յոգնութեան, ժամանակի կորուստի և ծախուց հետ ամեն օր պիտի համոզուի որ հաստատութեանս գոյութիւնը իրական ստաւելութիւն մ'է մաքրութեան խնայողութեան և հանգստութեան տեսակէտով:

Յ. Թօփուչանց

### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան վերակացու Մովսէս Ե. պիսկոպոս արդէն Ատանա մեկնեցէ: Ամսոյս մէջ պիտի գումարուի ընտրողական ժողովը: Կիլիկիցիք մեծ փափաք ունին վերջ տալու այդ անվերջ դարցած խնդրին:

—Պէյրոյթի մէջ Թօփուսագալեան Յովակիմ անունով ազգային մը մեռնելով Երուսաղէմայ յոյն պատրիարքին պահ տուած 400 գաղ. ոսկին նուիրեր է Պոլսոյ ազգային հիւանդանոցին:

—Էյմիածնի 1600րդ տարեգարձի տօնի առթիւ Բարիզէն էջ

միածին հրախուրտեր է նկարիչ Պ. Սոփոն Պէզիրճեան վեհարանը գեղազարդելու համար :

— Կաթուղիկոսի ազգարարութեանց վրայ Մանչէսթրի քահանայ Թորոս Զուղայեցին հտկեցեր է հոգաբարձութեան դէմբացած դատէն :

— Վառնայի նահանգային վարչութեան անդամ ընտրուած է պ. Յակոբ Մովսիսեան : Առաջին անգամն է որ հայ մը կընդունուի այս կարեւոր մարմնին մէջ :

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵՆ

Տէ՛ր Խմբագիր,

Հաճեցէք սոյն երկտողս անփոփոխ հրատարակել ձեր պատուական թերթին մէջ :

Քանի մը շաբաթներէ ի վեր քաղաքիս մէջ գտնուող գերասանները սկսած են իրենց մասնաւոր նպաստները տալ . Գ. Յակոբեանն ալ իրեն համար նպաստ մը տալու ետեւէ ընկած է . այդ պարոնն է անիկայ որ եօթը ամիս առաջ քաղաքիս մէջ «Օրինակ» խումբ մը կազմեց իւր շուրջը հաւաքելով կարգ մը երիտասարդներ անոնց ապագայի շրջուցիչ խոստումներ տալով :

Այս խումբը կազմելու մէջ Յակոբեանը միայն զինք Տիրէթէօն մը հռչակելու մարմաշէն բռնուած ըլլալով, շուտով ա՛լ իր սնօտի գաղափարներով հրապարակ իջած ըլլալը հասկցաւ՝ և Ռուսոն քէն նամակ նամակի վրայ ու «Թէլէֆօնով» ձայնը մարելու աստիճան խնդրեց «Վէստէ» խմբէն որպէսզի զինք հիւրնկալեն իրենց մէջ : Այդ «Վէստէ» խումբը զոր անհուն կատէր ու կ'սնպատուէր իր պիղծ լեզուովը սրճարանական ազոտս մթնոլորտներուն մէջ . շատ զարմանալի կէտ մը մեզ համար և բոլորովին անմեկնելի թէ՛ ինչպէս բաւական յարգուած ու լաւ ճանչցուած «Վէստէ» ալ պիտի հիւրնկալէր իւր մէջ իրեն համար ազոտութեան նշանակեղոյ այդ անձը :

Եւ այս տիւր մարդը իմանալով որ յառաջիկայ շաբթու իր շահասիրութեան զոհեր դարձուցած քանի մը երիտասարդներ «Վառնէթէ» խմբին օժանդակութեամբ իրենց համար նպաստ մը տալու դիտաւորութիւն ունին, անմիջապէս մէջտեղ իյնալով իրեն համար նպաստ մը սարքած է որպէսզի անյաջողութեան մատնէ այդ Ռուսոն քէ մէջ վերին աստիճանի դժբախտութեան մատնած ընկերները, այն ընկերները որոնք կաշխատին դեռ եւս Ռուսոն քէ մէջ ունեցած պարտքերն ին վճարելու և որոնց ճամբու ծախքի համար եղած օգնութիւններն ալ, քանի մը վտճառական

ներու կողմէ, անամօթարար գրպանած է Յակոբեան կոչուած արարածը :

Արդ պատուարժան հարգանքներով կը թողում ես Ռուսոն քէ ո՞ր աստիճանի նպաստաւորութիւն արժանի է Գ. Յակոբեանը՝

Վառնա 9 օգոստոս

Յ. Գ.

Օրինակ մ'ալ «Ռուսոն քէ» շրջուած է :

Նոյն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Փրանսական հիւպատոսները իրենց կառավարութեան տեղեկագրած են որ Մակեդոնիոյ վիճակը շատ գէշ է . քրիստոնեայ ժողովուրդը վրէժխնդրութեամբ տողորուած է և եթէ եւրոպական միջամտութիւն մը տեղի չունենայ, մեծ պատուհասներ տեղի պիտի ունենան :

— Սուլթանի հրամանով Իսուկիւպի վալին տեղական քրիստոնեաներէն պահանջեր է որ շնորհակալութեան թուղթ մը պատրաստեն Սուլթանին մատուցանելու համար :

Այդ թղթին մէջ քրիստոնեաները պիտի յայտարարեն որ Սուլթանի հովանաւորութեան տակ շուտ լաւ կապրին, և արտասահմանեան թերթերուն մէջ երկրի մասին եղած դժնդակ նկարագրութիւնները սուտ են :

— Միացեալ նահանգներու և Ք. Դրան յարաբերութիւնները լարուած են քանի մը դեռ չը կարգադրուած խնդիրներու պատճառով, այդ խնդիրները մեծ մասամբ կը վերաբերին Միացեալ նահանգներու հիւպատոսներու և թուրք իշխանութեանց միջեւ տեղի ունեցած վէճերուն : Դիսպանութիւնը կը մերժէ Ք. Դրան հետ ուրիշ ու է խնդրի մը մասին յարաբերութեան մէջ մտնել քանի որ այդ վէճերը դեռ լննցած չեն : Կը կարծուի որ Ք. Դրանը պիտի կարգադրէ այդ խնդիրները որպէսզի Ամերիկայի հետ ընդհարում մը չը պատահի :

— Ի. Դուռը գրաւոր կերպով պուլկար կառավարութեան խոստացած է Սէրէսի գործակատարական խնդիրը կարգադրել :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Նախարարապետ պ. Տանէֆ Սերպիոյ մայրաքաղաք Պիլկրատ մեկնած է, կը կարծուի որ պ. Տանէֆ Մակեդոնիոյ մասին խորհնդակցութիւններ պիտի ունենայ Սերպ կառավարութեան հետ : — Մակեդոնական նոր Բ. կօ-

վթէի նախագահ ընտրուել է ինժինէր Սթանիշէֆ : Նոր կօմիթէն յայտարարութիւն մը ցրուել է որուն միջոցաւ կը դատապարտէ Միխայիլովսքիի նախագահութեան տակ եղած Բ. կօմիթէն :

Յ Ր Ա Ն Ս Ա

Արքայական կուսակցութիւնը խնդրեր է Օրլեանի դքսէն վերջ տալ իր համբերութեանը և նշան տալ որպէս զի ստրկացած Փրանսիային վերագործեն խաղաղութիւնը, պատիւը և արդարութիւնը :

Ձ Ո Ւ Ի Ց Ե Ր Ի Ա

Դաշնակցական խորհուրդը վճուր է երկրէն արտաքսել կղերականներու 11 ընկերակցութիւններ : Այդ ընկերակցութիւններուն 90 օր ժամանակ տուել է իրենց գործերը կարկազրելու համար :

Ա Ն Գ Լ Ի Ա

Պօէր զօրավարը շատ գոհ մնացեր են թագաւորին ըրած ընդունելութենէն :

Թ Ր Ա Ն Ս Ա Ա Ա

Պօէր զօրավարները Պօթա, Տուէթ և Տէլարէյ Լահէ հասեր են . ժողովուրդը փառաւոր կերպով ընդունել է զանոնք : Պօթա շնորհակալութիւն յայտներ է ընդունելութեան համար և յայտարարել է որ ինք և ընկերները առայժմ չը պիտի կրնան ըսել իրենց սրտերուն մէջ գտնուածը, բայց շնտով ամենը պիտի հրատարակեն :

— Լահէն կը հաղորդեն որ Պօթա, Տուէթ և Տէլարէյ զօրավարները տեսակցութիւն մը պիտի ունենան Օրանի նախագահ Շթէյնին հետ և շաբաթէ մը վերջը կրկին Անգլիա պիտի վերադառնան :

Ձ Ի Ն Ա Ս Ա Ն

Բէքիւնէն կը հաղորդեն որ Ձինաստանի բարենորոգիչներու կուսակցութիւնը Իսկահամայի մէջ նոր թերթ մը հրատարակել սկըսեր է . այդ թերթը ամիսը երկու անգամ կը լլայ եւ մեծ յաջողութիւն գտեր է : Բէքիւնի պահպանողական կուսակցութիւնը մեծ խոսովութեան մէջ է այդ թերթին երեւան գալուն պատճառով և կառավարութեան տեղեկագիր մը տուել է խնդրելով որ այդ թերթը դադարեցունէ, որոհեաւ

հասարակութեան համար այդ տեսակ թերթերուն ընթերցումը փաստակար է :

Ս. ՆՁՆԱՍՊՈՆ ՄԵՌԵԱԼԸ

Փրանսայի նշանաւոր վեպաստներէն Ռընէ տը Բօն-ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ եւ բարոյալից վէպն

21<sup>ր</sup> և 22<sup>ր</sup> թերթերը հրատարակուեցան :

Գիրքը շաբաթը երկու թերթի կը հրատարակուի եւ իւրաքանչիւր թերթը կը ծախուի 5 սանթիմի : Ամբողջ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ :

Վառնայի համար բաժնեգին 1 ֆր. : Ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի համար 1.20 :

Վառնայէ դուրս, Պուլկարիոյ եւ արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով կը զրկուին . փոսթի ծախքը հրատակչին վրայ է : Դիմել հետեւեալ հասցէին՝ Imprimerie Orientale Onnik Parseghian, Varna. Դրանի փոխարէն նամակադրոյժ ալ կ'ընդունուի :

ԹԱՏՐՈՆ „ՊՕՐԻՍ“

Համի Բանաֆօ

Ա մ ա ո ն ա յ ի ն շ ր ջ ա ն

ՎԵՍԵԼՈ

Հայ դերասանական խմբին կողմէ Յոսաքիկայ չորեքշաբթի գիշեր պիտի ներկայացուի :

Ի ՆՊԱՍՏ

Տ. ԳՐԻԳՈՐ և Տ. ՅԱԿՈԲԵԱՆԻ

ԿԱՐՄԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ

խիստ բարոյալից տրամ 6 արար զարգարուն տեսարաններով

Անբախտ էլէնիի դերը պիտի կատարէ Տիկին Յակոբեանը

«Մայր Արաքսի» և «Միժեռանակ» պիտի երգէ Օր. Ռօզալին

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐԳ

Պ.Գ.Յակոբեանի եւ Օր. Րոզալիի կողմէ խիստ ծիծաղաշարժ զաւելոյ Պ. Ա. Պէլեանի կողմէ

Պ Ա Լ Է Դ

Օրինոյ Բարսաֆօյի կողմանէ

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимостъ“ Варна.